

կան ժամանակահատվածներում «արժանացել են» նաև ցարական զրաքննության ուղադրությանը: Այսպես, երբ 1882 թ. արժարժվում էր Հայկական հազար, ցարական զրաքննիչները կառավարական շրջանների ուղադրությունը հրավիրում էին «Մասիս» և «Արևելյան մամուլ» պարբերականների վրա, որոնք իրր կոչ էին անում՝ Թուրքիայում ազատագրվելիք հայկական նահանգներին միացնել նաև Ռուսաստանի հայաբնակ նահանգները: Այս առիթով Կովկասի կառավարչապետ Ա. Դոնդուկով-Կոստակովի և Կովկասի զրաքննական կոմիտեի նախագահ Կ. Յակիմովի միջև տեղի ունեցած զրադրության մեջ նա արտահայտվել է այն միտքը, թե արևմտահայերի անկախության հասնելու շարժումները տեղի լրագրողներին ևս զորում են քաղաքական առումով անբարենպաստ հոգովածներ սպառնել, որոնցից դժվար չէ կուսակցի լրագրողներին ձգտումը՝ Բուլկինի կոնգրեսի 81-րդ հոգովածի կապակցությամբ պրոպագանդելու: Հայաստանի վերանորոգման անհրաժեշտությունը, իրր մի քաղաքական անկախ մարմին:

1884 թ. Ռուսաստանի մամուլի գործերի գլխավոր վարչության պետ Ե. Ֆեոկտիստովը Կովկասի զրաքննական կոմիտեին զգալիացնում է արևմտահայերի շարժումներին, որոնց ղեկավարները, ինչպես գրում է նա, առիթը չեն կորցրել Ռուսաստանի հայերի մեջ նա տարածելու իրենց սեպարատիստական գաղափարները: Ֆեոկտիստովը շեշտելով «Ռուսաստանի նկատմամբ առանձնահատուկ կրքով և ատելությամբ տոգորված «Հայրենիք», «Մասիս» և «Բերլինյան էֆֆյուր» թերթերի «վտանգավոր» հրապարակումները, կարգադրում է ուժեղացնել հսկողությունը ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հայ մամուլի նկատմամբ²:

2 Մ. Միսիսիսյան. Նյութեր հայ պարբերական մամուլի զրաքննության պատմությունից. — ՊՐԷ, 1968, № 2, էջ 150—152:

1888 թ. Կովկասի զրաքննական կոմիտեն (և՛ է՛ արձակում արգելել էլ միասին Աթոսին և Հայկական հարցին նվիրված հոգովածների տպագրությունը: 1884 թ. առաջարկ է մշակվում՝ զոնե մինչև կաթողիկոսական ընտրությունների ավարտը (1885 թ.) արգելել «առավել ընթանական ուղղություն» «Արևելքի» մուտքը Անդրկովկաս³:

Իսկ ի՛նչ մեղքեր էին գործել վերոհիշյալ պարբերականների հրապարակատուները: Թեև կաշկանդված սեփական երկրի զրաքննական օրենքներով, երանք, այնուամենայնիվ, 1880-ական թթ. հնարավորություն ունեին քննադատելու ցարական կառավարության քաղաքականությունը համազգային մի շարք խնդիրների վերաբերյալ: Դրանք էին էլ միասին Աթոսի անկախության ապահովման, Պոլսոնիկն վերացնելու, կաթողիկոսական ընտրությունները կառավարության միջամտությունից զերծ պահելու խնդիրները: Երանք վերգոմումների ձայն էին բարձրացնում հայկական զպրոցները 1885 թ. փակելու առիթով, քննադատում էին ցարական զրաքննության խրատությունները, որոնք Արփիարյանը անհանդուրժելի էր համարում, իրր երնդդեմ մտաց բարրարոսություն⁴:

Ալեքստ Խառատյանի գիրքը աչքի է ընկնում գիտական ընդհանրացումներով և պատմական ժամանակաշրջանի իրողությունների զնահատմամբ: Գրախոսվող աշխատությունը միաժամանակ լուրջ հայտ է արևմտահայ պարբերական մամուլի XIX դարի պատմության ստեղծման համար, որի կարիքն այսօր շափազանց մեծ է:

3 Նույն տեղում, էջ 157:

4 «Մասիս», 1884, № 3736:

Մ. ՄԻՍԻՍԻՅԱՆ

АМИРДОВЛАТ АМАСИАЦИ. *Неужное для неучей*, пер. с армянского, вступ. статья и комментарии С. А. Вартапян. Наука, 1990, 880 с.

Մոսկվայի ընառկա հրատարակությունը, 1990 թ., 40 հազ. օրինակ տպաքանակով, լույս ընծայեց ԽՍՀՄ ԳԱ ռիտական ժառանգություն» մատենաշարի 13-րդ հատորը, որը

նվիրված է միջնադարի հայ խոշորագույն բժիշկ, ընախույզ, բառարանագիր Ամիրդովլաթ Ամասիացու (XV դար) հուշակավոր ընդգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նի-

Քոջ աշխատությանը (զրված 1478—1482 թթ.)՝ Ստվարածավալ հատորը (330 էջ) հրատարակության և պատրաստել 22 նախարարների խորհրդին առնվեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ղեկավարողական ինստիտուտը՝ Մատենադարանը, խՍՀՄ ԳԱ Բնագիտության և տեխնիկայի պատմության ինստիտուտի մասնակցությամբ։ Ընդգրկող ռուսերեն թարգմանությունը, առաջաբանն ու ծանոթադրությունները կատարել է հայ բժշկության պատմության և ձեռագիր հուշարձանների անխնշ հետազոտող, բժշկական գիտությունների թեկնածու Ս. Ա. Վարդանյանը։ Գիրքը խմբագրել են ՀՀ ԳԱ թղթակից անդամ է. Ս. Գաբրիելյանը, կենսափրանական գիտությունների թեկնածու Լ. Վ. Թևոկյան, աշխարհագրական գիտությունների թեկնածու Օ. Ա. Ալեքսանդրովսկայան, տպագրությունը կատարված է բարձր որակով։

«Անգիտաց անպետ» ոչ միայն հայ, այլև միջնադարի համաշխարհային գիտության ու մշակույթի մեծարժեք, միշտ պետական ու օգտակար մի հուշարձան է, որը, վերջապես, ռուսերեն թարգմանությամբ արդի գիտության լայն ոլորտն է մտնում իր գիտական ու գործնական նշանակության արժանի միջադրային ճանաչում ձեռք բերելու իրավունքով։ Հայ մատենագրության այս նշանավոր երկը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի և արտասահմանյան գրապահական օջախների սովելի քան երեք տասնյակ ձեռագրերով, որոնք ընդօրինակված են հիմնականում XVII—XVIII դդ.։ Հուշարձանն առաջին անգամ տպագրվել է 1926 թ. Վիեննայում՝ Ամիրգոլյովի աշխատությունների եռանդուն հետազոտող, ֆարիզի հայ բժշկական միության փոխտեսնապետ Կ. Բասմաջյանի աշխատասիրությամբ։ Բնագիրը տպագրության է պատրաստվել մի քանի ձեռագրերի հիման վրա՝ հետագա ժամանակներում տարբեր մարդկանց կողմից ձեռագրերում կատարված ավելացումների՝ ղեկավարողների ու դրանց մեկնությունների ընդգրկումով, օժտված է առաջաբանով (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), ծանոթագրություններով, ցանկերով, ձեռագրերի լուսանկար նմուշներով։

Այդ տպագրությունը ժամանակին բուռն հետաքրքրություն է առաջացրել բժշկական Ամիրգոլյովի երկերի, մասնավորապես նրա ղեկավարության վերաբերյալ, ապա հայագիտության մեջ հասունացել է «Անգիտաց անպետ» օտար լեզուների և առաջին հերթին ռուսերեն թարգմանությունը ձեռնարկող առաջին

մասնագետների (Գ. Հարությունյանի, Ս. Սեպեմյանի, Ա. Կոչյանի) աշխատանքը (բառահոգվածների միայն 25 տոկոսի թարգմանությամբ) ավարտի չհասավ։ Գրքի ռուսերեն հրապարակումը վիճակված էր Ս. Վարդանյանին։

«Անգիտաց անպետ» ներկա հրատարակությունը վիթխարի գիտական ու բանասիրական աշխատանքի արգասիք է։ Այդ աշխատանքի բովանդակությունն ու բարդությունը պատկերացնելու համար բավական է հիշատակել նրա հիմնական ուղղությունները. աղբյուրագիտություն, բնագրաբանություն, թարգմանություն, գիտական քննություններ, ծանոթագրություններ, աղբյուրների ու ցանկերի կազմում, որոնց համակողմանի մշակումն ապահովել է գրքի բովանդակային, նաև կառուցվածքային կատարելությունը։

Ամենից առաջ՝ աշխատասիրողին լրջորեն մտահոգել է իր թարգմանության համար «Անգիտաց անպետ» հայերեն բնագրի ընտրության հարցը։ Այդ նպատակով «Անգիտաց անպետ» տպագիր օրինակը ստուգվել է Բրիտանական թանգարանի գրադարանի № Օր 3712 և Մաշտոցի անվան Մատենադարանի № 414, 457, 460 և այլ ձեռագրերի համեմատությամբ։ № Օր 3712 ձեռագիրը գրվել է 1490 թ. Ամիրգոլյովի հանձնարարությամբ, ստուգվել է նրա կողմից, հետևաբար հնդկական օրինակի արժեք ունի։ Այդ ձեռագրին առաջնակարգ կարևորություն է տրված թարգմանության հիմք ընդունվող բնագիրը որոշելու, ներառում ուղղումների, ճշգրտումների ու վերականգնումների կատարելու համար։ Աղբյուրների համեմատություններից, աղբյուրագիտական ու բնագրաբանական հանգամանքների ուսումնասիրությունից պարզվել է, որ թարգմանությունը, այնուամենայնիվ, պետք է կատարվի Կ. Բասմաջյանի հրատարակած բնագրի հիման վրա՝ նրանում բանասիրական պրպտումների շնորհիվ կատարված փոփոխություններով հանդերձ։

Ուստի ներկա ռուսերեն օրինակը Կ. Բասմաջյանի հրատարակած հայերեն բնագրի նույնական վերարտադրությունը չէ ռուսերեն լեզվով։ Հայերեն տպագիր օրինակի 3754 բառահոգվածի դիմաց ռուսերեն օրինակն ունի 3373 բառահոգված (ըստ թարգմանության՝ պարագրաֆ)։ Այդ պատճառով հայերեն և ռուսերեն բնագրերում համապատասխան զխաբաղբը չեն համընկնում բառացանկերում իրենց գրաված տեղով և իրենց հերթական կարգը նշող իվահամարներով։ Բանն այն է, որ Կ. Բասմաջյանը հիմք է ընդունել մի ձե-

նազիր, որի նախօրինակի վրա հետագայում կատարվել են ավելացումներ Բունիաթ Սեբաստացու և այլ անձանց կողմից: Կ. Բասմաջյանը բնագիրը հրատարակել է նախօրինակ բնագրին անհարազատ այդ լուսանցային ավելացումներով: Ս. Վարդանյանն այդպես չի վարվել:

Նկատի ունենալով «Անգիտաց անպէտի» հետագային ձեռագիրը, նա իրավամբ թարգմանություն մեջ չի ընդգրկել այն բոլոր ավելացումները (ատրիլալի դալպ, ամառիտան, անկուր, աւթիար, բզեզ, դեղնախոնկ, կարճադ, ճավիթուկ, պուտրինէ, ցրտահալ, փշատի, քարթանքալա և այլն), ընդամենը 376 բառահոգոված, որոնք տեղ են գտել Կ. Բասմաջյանի հրատարակած բնագրում:

Թարգմանությունից առաջ հայերեն բնագրում կատարվել են ուղղումներ, վերականգնումներ, զանազան կարգի լուսաբանումներ: Ձեռագիր ու տպագիր աղբյուրների մանրազրնին ու բծախնդիր պրպտումներից պարզվել է, որ «Անգիտաց անպէտի» գրչագրերում, ինչպես նաև տպագիր օրինակում և առաջին (անավարտ) ուսերեն թարգմանության մեջ, կան աղավաղված բառեր ու տերմիններ, որոնք կամ անտեսվել, կամ էլ լիարժեք ու հավաստի բանասիրական վերականգնումների, ինչպես նաև ճիշտ գիտական մեկնաբանությունների շնն արժանացել մասնագետ հետազոտողների ու բանասերների կողմից: Ռուսերեն անավարտ թարգմանության մեջ, օրինակ, «մի շարք դեպքերում տեղ են գտել առանձին դեղամիջոցների սխալ մեկնություններ» (էջ 505):

Դժվար է եղել հատկապես աղավաղված ու անստույգ օտար տերմինների, դեղերի հին և միջնադարյան անունների շփոթումների, աշխարհագրական անվանումների, անձնանունների վերականգնման աշխատանքը. բնագիրը ներկայացնող աղբյուրներից բացի օգտագործվել է հարուստ գրականություն, հին ու նոր ժամանակների բազմաթիվ հեղինակների բժշկագիտական, դեղագիտական, կենսաբանական, բնագիտական, աշխարհագրական, փիլիսոփայական, պատմական և այլ բնույթի աշխատություններ, քննական բնագրեր, բառարաններ՝ հայերեն, ռուսերեն, պարսկերեն, արաբերեն և այլ լեզուներով: Արաբական ու պարսկական տերմինների ճշգրտումների համար, հայերեն ձեռագրերից բացի, օգտագործվել են հատկապես Իրն Սինայի, Բիբլոնի, Իրն Բայտարի, իսկ հունական տերմինների ճշգրտման համար՝ Դիոսկորիդոսի և Գաղիանոսի երկերը: Ձեռագիր ու տպագիր աղբյուրների համեմատություններն ու հետազոտությունները հաստա-

տել են աշխատասիրողի նախնական կարծիքն այն մասին, որ հայերեն բնագրերում առկա աղավաղված ու աղճատված օտար տերմիններն իրենց այդ վիճակով զալիս են հիմնականում Ամիրզոլաթի օգտագործած արաբական աղբյուրներից:

Ռուսերեն թարգմանությունը (էջ 13—503) կատարված է հայերեն ճշգրտված բնագրի ուղղի հետևողությամբ: Միջին հայերենով շարադրված բառահոգվածները ժամանակակց ռուսերենի են թարգմանված բովանդակության ճշտությամբ, ամբողջությամբ. կրկնությունների և զլխաբառերի դիմաց (Կ. Բասմաջյանի կողմից ավելացված) դրանց ֆրանսերեն անվանումների բացթողումով, պարզ ու անպաճույճ շարադրանքով:

Թարգմանության սկզբունքները կիրառված են հետևողականորեն: Բուժիչ նյութների, տերմինների ու մասնագիտական բառերի, ինչպես նաև լայն ճանաչում չունեցող ձևերով անունների արտահայտման համար օգտագործվել է Կ. Ն. Յուզբաջյանի կողմից առաջարկված գրադարձական համակարգը (էջ 511), հիմնված զլխալորապես ռուսական այբուբենի վրա: Եվ եթե բնագրի թարգմանության մեջ ամբողջ մասնագիտական տերմինաբանությունը, այդ թվում արաբական ու պարսկական դեղանուններն ու բժշկական տերմինները, գրադարձված են ըստ այդ համակարգի, ապա ծանոթագրություններում կիրառված է արաբերեն և պարսկերեն բառերի համար Ի. Յու. Կրաչկովսկու առաջարկած հնչյութաբանական տառադարձական համակարգը, չորս հարմարեցված է արաբերեն և պարսկերեն հուշարձանները ռուսաց լեզվի թարգմանելու համար (էջ 512): Ապա՝ «Անհրաժեշտ է նշել,— գրում է թարգմանիչը,— որ գլուխների անվանումները բնագրում բացատրվում են միայն ռուսերեն լեզվով, մինչդեռ ծանոթագրություններում ռուսերենին զուգընթաց տրվում են լատինական անվանումները, ընդ որում, արդի անվանակարգում ընդունված տերմիններին զուգահեռաբար բերվում են դրանց՝ Թեոֆրաստեսի, Դիոսկորիդոսի, Գաղիանոսի գործածած հունարեն համարժեքները (լատինական տառադարձությամբ)»: աղբյուրները, վկայակոչումների մեջ, որպես կանոն, բերվում են ժամանակագրական կարգով (էջ 512):

Բնագրին հետևում է մեկնաբանությունների բաժինը (էջ 504—803)՝ գիտական քննությունների, լուսաբանումների, փաստերի, տեղեկությունների ու դիտողությունների մի պատկանելի հավաքածու: Այդ բաժնում (էջ 504—

1959), Համապատասխան վերնագրերի տակ, ջնջվում են «Անգիտաց անպետի» ձեռագրերի ու դրանց ուսումնասիրության պատմության, թնազրի թարմանության, խմբագրության ու հրատարակման սկզբունքների, միջնադարյան Հայ դեղագիտության բովանդակության ու կառուցվածքի, դրթի աղբյուրների, բուսաբանության և աշխարհագրության, բուժիչ միջոցների, լեղվի ու գիտական տեղեկանքների հարցերը Օրինակ, «Միջնադարյան Հայ դեղագիտության բուժիչ միջոցները և արդի բժշկության մեջ դրանց օգտագործման հեռանկարները» գլխում «Վարակիչ և ալերգիկական հիվանդությունների բուժումը», «Երիկամների և միզափամփուլի հիվանդությունների բուժումը», «Նյարդային և հոգեկան հիվանդությունների բուժումը», «Զարոբակ և բարոբակ ուռուցքների բուժումը», «Սերունդական հասակի հիվանդությունների բուժումը» ենթավերնագրերի առկա ամփոփումը և մեկնաբանվում են «Անգիտաց անպետի» հիշատակվող հիվանդություններն ու դրանց բուժման համար օգտագործվող դեղամիջոցները:

Աշխատանքի այս մասը փաստորեն մի ամփոփ ու ամբողջական ուսումնասիրություն է հարցերի դիտական, արդիական վերլուծություններով ու հզորակացություններով: Նշելի է ընդհանր, որ դրթի առաջաբանը (էջ 5—12) Հայ մեծանուն բժշկապետի ու գիտնականի կյանքի, գործունեության, նրա գիտական վաստակի, հատկապես «Անգիտաց անպետի» Հայ բժշկական-բնագիտական մտքի զարգացման համար ունեցած նշանակության բացահայտման ու գնահատման մի համառոտ ու բովանդակալից ակնարկ է, որտեղ մասնավորապես նշվում է. «Գրթի» Հայերեն այբուբենի կարգով դասավորված 3378 պարագրաֆներում նկարագրվում են մոտ 1000 բուսական տեսակներ, 250 կենդանական պատրաստուկներ և 150 հանքեր, ինչը զգալիորեն գերազանցում է արևելյան բժշկության դասականների նույնատիպ աղյուսակներին, այդ թվում իրեն Սինայի «Կանոնի» երկրորդ գիրքը և Բիրունիի «Սայդանան» (էջ 11):

Գրթի մի ընդարձակ բաժինն են կազմում ծանոթագրությունները: Դրանք մշակված են խնամքով, նախանձնի բծախնդրությամբ: Ծանոթագրվող միավորների վերաբերյալ տրվում են բազմապիսի տեղեկություններ գրթի համար օգտագործված ամբողջ գրականության ներքին, նշվում են վկայակոչումների աղբյուրները, կատարվում են հետաքրքիր մտահանգումներ, գիտություններ, ծանուցումներ ու հրդումներ: Կան ծանոթագրություններ, որոնք

առանձին գիտական հոդվածի նյութ կարող են դառնալ: Ծանոթագրությունների ուղղությամբ էլ տեղական, նպատակասլաց ու անբասիր աշխատանք է կատարել իր գործին ամբողջությամբ նվիրված Հայագետ Ս. Վարդանյանը:

Վերջապես հաշորդում են օգտագործված դրականության, անվանական, համառոտագրությունների, կշռի ու երկարության չափերի, աշխարհագրական ու ազգագրական անվանումների, բուժիչ միջոցների լատիներեն ու ռուսերեն անունների ցանկերը:

Գրախոսվող գիրքը մեծ նշանակություն ունի դեղագիտության, բնագիտության, կենսաբանության, աշխարհագրության, հանքաբանության, բառարանագրության և այլ գիտությունների պատմության ուսումնասիրության համար, հարուստ նյութ է ընձեռում մասնագետ հետազոտողներին, նրանց օգնում է միջնադարյան բուժիչ նյութերը, ինչպես նաև դեղագետների ու բժիշկների փորձը արդի բժշկության մեջ կիրառելու գործում: «Անգիտաց անպետը» ընթերցողին է ներկայանում ճշգրտված ու ստույգ Հայերեն բնագրի ռուսերեն թարգմանությամբ, Հայ միջնադարյան բժշկության, բնագիտության և, առհասարակ, Հայ մատենագրության ֆունդի վրա տպագրի ու ձեռագրի աղբյուրների փաստերի լայն ընդգրկումով, դրանց համակարգումով ու բարձր մակարդակի գիտական մշակումով:

Գրթն ամբողջությամբ տարիների անդադրում, բեղմնավոր աշխատանքի արդյունք է՝ ըստ ամենայնի լիարժեք ու հաջողված: Նման աշխատանք կարող էր կատարել միայն մասնագիտական խոր պատրաստականությամբ ու հմտությամբ, բանասիրական ու բնագրաբանական աշխատանքի հարուստ փորձով, մայրենի և օտար լեզուների իմացությամբ, գիտական բարեխղճությամբ, այլև Հայրենասիրական ազնիվ նվիրումներով օժտված գիտնականը, որն իր մեծարժեք գիրքը, փոքրիկ ընծայականով, նվիրում է 1988 թ. երկրաշարժի զոհերի հիշատակին:

Ասենք նաև, որ նման ծավալուն, գիտական, թարգմանական, բնագրաբանական ու բանասիրական բնույթի բազմաթիվ բարդությունների հաղթահարումով ստեղծված գիրքը չէր կարող զերծ լինել թեկուզ առանձին, մասնակի, որակ չկազմող թերություններից, ինչպես, օրինակ, գլխաբառերի թվահամարներից առաջ պարագրաֆի սիմվոլի (8) ալբերգությունը, գրադարձական այբուբենում տառադրություններից առաջ Հայերեն համապատասխան տառերի բացակայությունը, տառադար-

ձուլման նկատառումով Ամիրզոլվաթի անհետնողականության ակնարկումը և այլն, որոնք մասամբ պայմանավորված են տպագրության տեխնիկական հանգամանքներով: Անհրաժեշտ էր «Անգիտաց անսլետը», թարգմանության առաջաբանում, ամփոփ կերպով ներկայացնել ձևի տեսակետից՝ որպես բառարանային կառուցվածք ունեցող երկ՝ բառարան բժշկական նիւթոց, ինչպես և հիրավի նշված է գրքում, որ Ամիրզոլվաթի այդ գիրքը «միջնադարյան հայ բժշկության բուժիչ միջոցների իսկական հանրագիտարան է եղել» (էջ 552): Այդ հանրագիտարանի հեղինակը ոչ միայն մեծահամբավ բժիշկ ու բնախույզ էր, այլև աչքի ընկնող մատենագիր, բանասեր, բազմաթիվ օտար լեզուների տիրապետող բառարանագիր, որին էլ իրավամբ պատկանում է հայերենի առաջին, արդի ըմբռնումով, իս-

կական գիտական բառարանի ստեղծման պատիվը:

Հայ մեծ բժշկի ու գիտնականի «Անգիտաց անսլետ» երկի այս ուսերեն հրատարակությունը նշանավոր իրադարձություն է հայ մատենագրության պատմության մեջ. Ամիրզոլվաթի հիշատակը հավերժացնող մի կոթող, որը թարգմանությամբ դառնում է բազմաթիվ ժողովուրդների սեփականություն՝ վերջապես ազգային մշակույթի սահմաններից միջազգային լայն ասպարեզ դուրս գալով: Գիրքը պատկանելի ներգրում է հայ մշակույթի գանձարանում: Այն հիրավի պատիվ է բերում աշխատասիրողին՝ Ս. Վարդանյանին. Դաշտոցի անվան Մատենադարանին, հայ մշակույթին և, անպայման, արժանի է ամենաբարձր գնահատման և խրախուսանքի:

Բաճասիր. գիտ. զոկուոր Հ. Մ. ԱՄԱՆԱՆ